ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 33 - 34 (16530) ՇԱԲԱԹ, 29 ԱՊՐԻԼԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

ԻՐԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՎ, ՎՐԱՍՏԱՆՈՎ ԴԵՊԻ ՍԵՎ ԾՈՎ

Ապրիլի 22-23-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, պաշտոնական երկօրյա այցով, գտնվում էր Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Իրանի նախագահ Հասան Ռոուհանիի, փոխնախագահ Իսհակ Ջահանգիրի եւ Մեջլիսի իսլամական խորհրդատվական խորհրդի նախագահ Ալի Լարիջանի հետ:

Իրանի նախագահի հետ հանդիպմանը, Ռոուհանին հայտարարեց, որ Թեհրանը ողջունում է Վրաստանի հետ հարաբերությունների զարգացումը բոլոր ոլորտներում: Հանդիպմանը հատուկ ուշադրություն հատկացվեց տրանսպորտին եւ Պարսից ծոց-Սեւ ծով փոխադրամիջանցքին: «Այդ ոլորտում Թեհրանի եւ Թբիլիսիի հարաբերությունների խորա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Սահմանադրական փոփոխությունների նախագիծը այս շաբաթ կներկայացվի Վրաստանի խորհրդարանին:

Իսկ փաստաթղթի երրորդ ընթերցմամբ վերջնական քվեարկությունն անցկացվելու է աշնանը: Այդ մասին պետական սահմանադրական հանձնաժողովի եզրափակիչ նիստի ավարտից հետո՝ հայտարարեց Վրաստանի խորհրդարանի եւ սահմանադրական հանձնաժողովի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Իրակլի Կոբախիձեն պարզաբանումներ ներկայացրեց սահմանադրական փոփոխությունների ընդունման ընթացակարգի հար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, իր նախաձեռնած «Սահմանադրությունը՝ բոլորինն է» քարոզարշավի շրջանակներում, այցելեց Սամցխե-Ջավախեթի:

Սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ իր հայեցակետի շարադրմամբ, երկրի նախագահը հանդիպումներ ունեցավ Ասպինձայում, Ախալցիխեում:

Ախալցիխեում երկրի նախագահը հանդիպում ունեցավ Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանի ուսանողների հետ, այցելեց Վարձիայի վանական համալիր, ծանոթացավ այդտեղ 2016 թվականի նոյեմբերի 1-ին տեղի ունեցած հրդեհի հետեւանքների վերացման համար իրականացվող վերանորոգման աշխատանքներին:

«Պահանջի'ր վրացականը» քարոզարշավի շրջանակներում, մինչ այդ Գիորգի Մարգվելաշվիլին այցելեց Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա գյուղ, որտեղ ծանոթացավ տեղի կանանց մենաստանի կողմից արտադրվող մթերքներին:

ՀՈԲԵԼՅԱՆ

ՏԱՍՆԱՄՅԱ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 25-ին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության կազմավորման 10-ամյա հոբելյանի նշանավորման համար, Թբիլիսիի Մթածմինդայի զբոսայգում անցկացվեց տոնական միջոցառում, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ բիզնես հատվածի ներկայացուցիչներ:

Միջոցառման շրջանակներում՝ Վրաստանում առաջին փոխվարչապետ, ֆինանսների նախարար Դմիտրի Քումսիշվիլին ներկայացրեց նախարարության եկամուտների ծառայությունում իրականացված բարեփոխումները, կառավարության չորս կետից բաղկացած տնտեսական ծրագրի իրականացման ընթացքն ու օրենսդրությունում ծրագրված նոր փոփոխությունները, որոնք կողմնորոշված են մասնավոր հատվածի առավելագույն խրախուսմանն ու ուժեղացմանը:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության գործունեության հաշվետվությու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է



Ապրիլի 24-ին համայն հայությունը, առաջադեմ միջազգային հանրության հետ միասին հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Հիշատակի արարողություններ կատարվեցին ողջ Հայաստանում, աշխարհի տարբեր երկրների հայ համայնքներում: Բողոքի կոչեր բարձրացվեցին Թուրքիայի մերժողական քաղաքականության դեմ եւ ուղերձ հղվեց միջազգային հանրությանը՝ ճանաչել 20-րդ դարասկզբի մեծագույն ոճրագործությունն ու դրանով կանխարգելել ցեղասպանությունների կրկնությունը:

Հայ Առաքելական եկեղեցու բոլոր թեմերում մատուցվեց հոգեհանգստյան պատարագ:

Ապրիլի 24-ին Հայաստանի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի մայրաքաղաքում, երկրի հայաբնակ վայրերում «Հիշում եմ եւ պահանջում» խորագրով անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին:

ԹԲԻԼԻՍԻ

ՀՈՒԾ ԵՐԵԿՈ՝ «ԲԻԼԹՄՈՐ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Ապրիլի 23-ին Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտա թիվ 29-ում, 32 հարկանի նորակառույց, հինգաստղանի «Բիլթմոր» հյուրանոցում կայացավ հուշ երեկո՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ արդարության պահանջի վերաբերյալ ելույթ ունեցավ «Վրաստանի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՉԵԽԻԱՆ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չեխիայի Հանրապետության խորհրդարանը, ապրիլի 25-ին կայացած նիստում, ձայների 104 կողմ, 0՝ դեմ, 0՝ ձեռնպահ հարաբերակցությամբ (96-ը չեն քվեարկել) ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ: Բանաձեւում, մասնավորապես, նշվում է. «Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատը դատապարտում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստների կողմից գրավված տարածքներում մարդկության դեմ գործած հանցագործությունները հրեաների, գնչուների եւ սլավոնների նկատմամբ, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հայերի ցեղասպանությունը եւ ազգային ու կրոնական այլ փոքրամասնությունների ցեղասպանությունը Օսմանյան կայսրության տարածքում, ինչպես նաեւ երկրագնդի այլ տարածքներում կատարված ցեղասպանական բռնությունները, եւ կոչ է անում միջազգային հանրությանը արդյունավետորեն կանխել մարդու եւ քաղաքացիական իրավունքների ոտնահարումներն աշխարհում, եւ վեճերը լուծել խաղաղ միջոցներով»:

Ավելի վաղ՝ Չեխիայի Հանրապետության նախագահ Միլոշ Զեմանն իր զորակցությունն է հայտնել Չեխիայի հայ համայնքին՝ Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի կապակցությամբ:

ՀՈԲԵԼՅԱՆ

ՏԱՍՆԱՄՅԱ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը ներկայացրեց ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, շնորհավորելով ծառայության աշխատակիցներին գերատեսչության կազմավորման 10-ամյակի առթիվ, նշեց, որ եկամուտների ծառայությունը անցել է արժեքավոր փոփոխությունների ու բարեփոխումների տասը տարի եւ այդտեղ աշխատում են մարդիկ, ովքեր մեծ պատասխանատվությամբ են աչքի ընկնում: «Այն բարեփոխումները, որոնք մենք սկսեցինք կառավարական չորս կետից կազմված ծրագրի շրջանակներում, շատ հակառակորդներ ուներ: Դա բավական դժվար քայլ էր, եւ մենք համոզված էինք, որ դա անհրաժեշտ է երկրի զարգացման համար, որպեսզի ստանայինք մի կողմից առավել թթվածին մասնավոր հատվածի համար, նոր նախաձեռնությունների համար, եւ մյուս կողմից, որպեսզի իրականացնեինք ֆինանսական միջոցառումներ՝ անցումային փուլում բյուջետային եկամուտների լրացման համար: Եվ դրանում մեծ է եկամուտներին ծառայության դերը»,- իր խոսքում հայտարարեց Վրաստանի վարչապետը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԻՋԵ

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցով: Նրա խոսքով, սահմանադրական փոփոխությունների նախագիծը ներկայացվում է խորհրդարանին: Դրանից հետո, ձեւավորվելու է համընդհանուր քննարկման կազմակերպչական հանձնաժողով, որից հետո կսկսվեն հանդիպումներ տարածաշրջաններում:

«Մենք կայցելենք տարածաշրջաններ եւ հասարակայնությանը լիարժեք տեղեկատվություն կփոխանցենք սահմանադրական փոփոխությունների հարցով: Մինչ օրս, ցավոք, հասարակայնությանը ներկայացվում է միայն սխալ տեղեկատվություն՝ իրականացվող փոփոխությունների մասին: Մեր խնդիրն է հասարակայնությանը ստույգ տեղեկատվություն ներկայացնել իրականացվելիք փոփոխությունների վերաբերյալ, եւ մենք դա կիրականացնենք համընդհանուր քննարկման տարբեր շրջանակներում: Մայիսի վերջին, երբ քննարկումները կավարտվեն, մենք կսկսենք հաջորդ փուլը: Դա փոփոխությունների խորհրդարանական քննարկումներն են: Հունիսին մենք ծրագրում ենք խորհրդարանում անցկացնել սահմանադրական փոփոխությունների հարցով երկու լսումների քննարկումներ»,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն եւ հավելեց, որ փաստաթղթի հարցով վերջնական երրորդ ընթերցումը կանցկացվի աշնանը, հոկտեմբեր-նոյեմբերին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԶԻՋՈՒՄ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Անդրադառնալով երկրի նախագահի ընտրության կարգին, Վրաստանի խորհրդարանի նախագահ, սահմանադրական հանձնաժողովի նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ հաջորդ տարի նախագահական ընտրությունների անցկացումն անմիջական կերպով յուրահատեսակ քաղաքական փոխզիջում է:

Եվ, կարեւոր է, որպեսզի այդ փոխզիջումը չկորցնի իր իմաստը, այդ դեպքում մեր կոնկրետ որոշումները կարող են վերանայվել:

Ինչպես նշեց Իրակլի Կոբախիձեն, սահմանադրական փոփոխություններով ներկայիս փաստաթուղթը հաջորդ տարի նախատեսում է երկրի նախագահի անմիջական ընտրությունը: «Այդ թեմայով խորհրդատվությունները շարունակվում են: Գտնում եմ, որ մեր երկարաժամկետ զարգացման համար անհրաժեշտ է վերջնականապես անցնել նախագահի ոչ անմիջական ընտրության: Այսպիսին է մեր միտումը: Ինչ վերաբերում է հաջորդ տարվա նախագահական անմիջական ընտրություններին, ապա դա քաղաքական յուրատեսակ փոխզիջում է: Այդ հարցում մեր հայացքներն այլ են, եւ մենք այդ քայլին դիմում ենք փոխզիջման համար, այսինքն՝ յոթ տարով պահպանում ենք այն համակարգը, որը սխալ ենք համարում երկարաժամկետ հեռանկարում»,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ԴԵՄ ԵՆ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՑՄԱՆԸ

Վրաստանի խորհրդարանական մեծամասնության որոշակի հատվածը դեմ է մեծամասնական ընտրահամակարգի վերացմանն ու լրիվությամբ համամասնական ընտրակարգին անցմանը:

Ինչպես հայտարարեց «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավոր Կախա Օքրիաշվիլին նշեց, որ մեծամասնական ընտրահամակարգը ապահովում է քաղաքական համակարգի կայունությունը: Նրա հայտարարությամբ, ինքը չի պաշտպանի մեծամասնական ընտրահամակարգի վերացումը:

Իր հերթին, «Վրացական երազանքի» պատգամավոր Վիկտոր Ջափարիձեն, ընտրահամակարգը չպետք է փոխվի, ընդհակառակը, երկիրը լրիվությամբ պետք է անցնի մեծամասնական ընտրահամակարգի: «Գուցե որեւէ մեկը պարզաբանի՞, թե ինչո՞ւ է մեծամասնական ընտրահամակարգը համարվում ոչ ժողովրդավարական: Սակայն ես թիմի անդամ եմ եւ, եթե մեր քաղաքական ուժի ներկայացուցիչները ինձ ապացուցեն իրենց դիրքորոշման ճշտությունը, ապա ես կփոխեմ իմ դիրքորոշումը,»,- հայտարարեց նա:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎՈՒՄ Է

Տնտեսական հանցագործությունների համար տուգանքը 50 հազարից հասցվում է 100 հազար լարիի, իսկ մի շարք դեպքերում քրեական պատասխանատվությունը վերացվում է:

Համապատասխան փոփոխությունները կատարվելու են հարկային եւ քրեական օրենսգրքերում:

Վրաստանի կառավարության նիստում, որը հաստատեց նոր օրինանախագիծը, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց. «Հայտնի փաստ է, որ տնտեսական իրավախախտումների ապաքրեականացումը մեր գլխավոր խոստումներից մեկն էր չորս կետից կազմված բարեփոխումների մեր ծրագրում: Սույն փոփոխությունների շուրջ աշխատում էր տնտեսական բլոկը, բնականաբար, առաջին հերթին, ֆինանսների նախարարությունը, սակայն Գիորգի Գախարիան այդ հարցով աշխատում էր, երբ դեռեւս զբաղեցնում էր բիզնեսի օմբուդսմենի պաշտոնը:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է տուգանքի ավելացմանը՝ 50-ից մինչեւ 100 հազար լարի: Բացի այդ, այնպիսի գործողությունների համար, որոնք իրենց բովանդակությամբ ներկայացնում են հարկային իրավախախտում, քրեական պատասխանատվությունը կվերացվի: Օրինակ, ապրանքների հաշիվ-հաշվառման, ոչ ակցիզային ապրանքի պիտակավորման եւ այլնի հետ կապված խախտումները»:



ՖՐԱՆՍԻԱ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ՝ ՄԱՅԻՍԻ 7-ԻՆ

Ապրիլի 23-ին Ֆրանսիայում անցկացվեց նախագահական ընտրությունների առաջին փուլը, որին մասնակցում էին 11 թեկնածուներ: Ընտրությունների արդյունքում «Հառաջ» շարժման հիմնադիր Էմանուել Մակրոնը առաջին տեղն է զբաղեցրել՝ հավաքելով ձայների 24,01 տոկոսը: «Ազգային ճակատ» կուսակցության առաջնորդ Մարին լե Պենը երկրորդն է դարձել իր օգտին տրված 21,30 տոկոս ձայներով: Հինգերորդ հանրապետության ղեկավարի ընտրությունների վճռորոշ փուլը տեղի կունենա մայիսի 7-ին:

OpinionWay սոցիոլոգիական ծառայության կողմից ապրիլի 25-ին անցկացված հարցման համաձայն, Էմանուել Մակրոնը հաղթանակ կտանի Ֆրանսիայի նախագահական ընտրությունների երկրորդ փուլում՝ իր գլխավոր մրցակցին՝ Մարին լե Պենին, գերազանցելով ձայների 22 տոկոսով: Այս ծառայության կանխատեսումներով՝ նախագահական մրցարշավի վճռորոշ փուլում Մակրոնի օգտին կքվեարկի ֆրանսիացիների 61 տոկոսը, լե Պենի օգտին՝ 39 տոկոսը:

ԹՈՒՐՔԻԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիայի համապատասխան գերատեսչությունները իսլամական քարոզչության, Գյուլենի կազմակերպության հետ կապի կասկածանքով դուրս են գրել 3224 անձի ձերբակալության օրդերներ: Մինչ այդ, մեկ գիշերվա ընթացքում, նման կասկածանքով ձերբակալվել է ավելի քան հազար մարդ:

Հիշեցնենք, որ 2016 թվականի հուլիսի 15-ին տեղի ունեցած անհաջող պետական հեղաշրջումից հետո, Թուրքիան ԱՄՆ-ից պահանջել է իրեն հանձնել հեղաշրջման կազմակերպման հարցով կասկածյալ, իսլամական քարոզիչ Փեթհուլա Գյուլենին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՄԵԴՎԵԴԵՎԻՆ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ Է ՄԱՏՎԻԵՆԿՈՆ

ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի պաշտոնաթողությունը պաշտպանում է երկրի բնակչության կեսը: «Լեվանդա» կենտրոնի կողմից անցկացված հարցման արդյունքներով, բնակչության 45 տոկոսը պաշտպանում է վարչապետի պաշտոնաթողության պահանջը: Փորձագետների կարծիքով, Մեդվեդեւին, ամենայն հավանականությամբ, կփոխարինի Վալենտինա Մատվիենկոն: Նշենք, որ վարչապետ Մեդվեդեւի վարկանիշի անկումը առանձնակի նկատելի դարձավ նրանից հետո, երբ Ալեքսեյ Նավալնո հիմնադրամը հրապարակեց Մեդվեդեւի սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի ցուցակը եւ վարչապետին մեղադրեց կոռուպցիայի մեջ:

ԵԽԽՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ապրիլի 25-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը քվեարկության արդյունքում որոշում է կայացրել Թուրքիային վերադարձնել մոնիտորինգի տակ գտնվող երկրի կարգավիճակը: Թուրքիան կառույցի կողմից մոնիտորինգի տակից հանվել էր 2004 թվականին:

ԵԽԽՎ Թուրքիայի հարցով զեկուցողները խստորեն քննադատում են 2016 թվականի հուլիսին ռազմական հեղաշրջման փորձից հետո հայտարարված եւ երեք անգամ երկարաձգված արտակարգ դրության պայմաններում կայացվող որոշումները՝ նշելով, որ դրանք վնասում են Թուրքիայում ժողովրդավարական կառույցների գործունեությունը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑ

ԸՆԴԳԾՎԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՌՈՒՄԻՆԻԱ



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ապրիլի 26-27-ին, երկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Ռումինիայում: Այցի շրջանակներում՝ Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ Ռումինիայի նախագահ Կլաուս Յոհանսոնի, վարչապետ Սորին Գրինդյանուի, Ռումինիայի սենատի նախագահ Կելին Պոպեսկու-Տերիչանուի, պաշտոնական այլ անձանց հետ:

Հանդիպումներում առանձնակի ուշադրություն հատկացվեց Սեւ ծովի տարանցիկ ներուժի օգտագործման եւ տարածաշրջանային ձեւաչափով երկկողմ համագործակցության խորացման հեռանկարներին, ընդգծվեց վրաց-ռումինական համագործակցության նոր փուլի՝ ռազմավարական հարաբերությունների անցման կարեւորությունը: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց երկու երկրների համատեղ հռչակագիրը, որտեղ նշվեցին ռազմավարական համագործակցության առաջնահերթությունները:

Ռումինական կողմը պատարաստակամություն հայտնեց աջակցել Վրաստանի եվրահինտեգրման կուրսին:

ՎՐԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

ԻՐԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՎ, ՎՐԱՍՏԱՆՈՎ ԴԵՊԻ ՍԵՎ ԾՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցումը կարող է օժանդակել տարածաշրջանի էական զարգացմանը»,- հայտարարեց Ռոուհանին:

«Հսկայական նշանակություն ունի Հյուսիս-Հարավ փոխադրամիջանցքի հարցը եւ Պարսից ծոցի ու Սեւ ծովի միջեւ Իրան-Հայաստան-Վրաստան կամ Իրան-Ադրբեջան-Վրաստան ուղեգծով կապի հաստատումը»,- հայտարարեց Ջահանգիրին:

Իրանի փոխնախագահի խոսքով, Թեհրանն արդեն պատրաստակամություն է հայտնել, որ Պարսից ծոցը Սեւ ծովի հետ կապվի Հյուսիս-Հարավ փոխադրամիջանցքով, որն այդ ուղեգծով միմյանց հետ կկապի Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը եւ Իրանը:

Իրանի առաջին փոխնախագահի հետ հանդիպման ավարտից հետո, Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ Իրանի իշխանությունների հետ որոշակի պայմանավորվածություն է ձեռք բերվել Պարսից ծոցի եւ Սեւ ծովի միջեւ տարանցիկ միջանցքի զարգացման եւ էներգետիկական համագործակցության մասին:

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, իրանական կողմը Վրաստանի հետ համագործակցելու պատրաստակամություն է հայտնել էներգետիկայի ոլորտում, այդ թվում՝ էլեկտրականության փոխանակման եւ Վրաստանին իրանական գազի մատակարարման հարցերում:

Իրանական կողմը պատրաստակամություն հայտնեց՝ ընդլայնել էներգետիկայի ոլորտում Վրաստանի հետ համագործակցությունը: Խոսքը վերաբերում է էլեկտրաէներգիայի փոխանակմանն ու Վրաստանին իրանական գազի մատակարարմանը: Կողմերն առանձնակի ընդգծեցին երկկողմ տնտեսական կապերի զարգացման կարեւորությունը եւ պայմանավորվեցին, որ Վրաստանի եւ Իրանի միջկառավարական տնտեսական հանձնաժողովի հաջորդ հանդիպումը կանցկացվի Վրաստանում՝ 2017 թվականի ամռանը:

Վրաստանի վարչապետի պաշտոնական այցի շրջանակներում՝ մի շարք փաստաթղթեր ստորագրվեցին: Համաձայնագրեր ստորագրվեցին նաեւ Վրաստանի եւ Իրանի մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջեւ:

Վրացական պատվիրակության կազմում ընդգրկված էին նաեւ էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, էկոնոմիկայի նախարար Գիորգի Գախարիան, պաշտոնական այլ անձինք:

ԿՐԹԱԿԱՆ

ՍԿՍՎՈՒՄ Է ՈՉ ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

«Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան-ուսուցիչների եւ դպրոցների տնօրենների մասնագիտական զարգացում» նախագծի շրջանակներում մեկնարկել է ոչ վրացալեզու դպրոցների մանկավարժների ու տնօրենների նախապատրաստումը:

Այդ նպատակով Մառնեուլիում նախագծի ներկայացուցիչները տեղեկատվական հանդիպում անցկացրին ոչ վրացալեզու դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր դպրոցների ներկայացուցիչներին ծանոթացնել նախագծի գործունեությանն ու վերապատրաստման ծրագրին մասնակցելու կարեւորությանը:

2017-2019 թվականներին նախագծի շրջանակներում վերապատրաստում կանցնեն քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի, անգլերենի եւ աշխարհագրության 2177 ուսուցիչներ, ինչպես նաեւ ոչ վրացական դպրոցների 213 տնօրեններ ու մասնագիտական զարգացման մարզիչներ, ովքեր նախագծի շրջանակներում ընտրվել են այդ դպրոցներից:

Ելնելով վարժանքների ու աշխատանքային հանդիպումների անհրաժեշտությունից, հանդիպումները կանցկացվեն ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն լեզուներով:

ՄՐՑՈՒՅԹ՝ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«ՎՐԱՑ ԼԵԶՈՒՆ ՃԱՆԱՊԱՐՀ՝ ԴԵՊԻ ԻՄ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ»

Այս վերնագրով երկրի հայկական դպրոցների բարձր դասարանցիների համար էսսեի մրցույթ է հայտարարել Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետնախարարի գրասենյակը:

Հայտերի ընդունումը կշարունակվի մինչեւ մայիսի 20-ը: Մրցույթի նպատակն է Վրաստանի հայկական դպրոցների IX-XII դասարանների աշակերտության շրջանում վրաց լեզվի իմացության կարեւորության մասին իրազեկվածության բարձրացումը:

Մրցույթն անցկացվում է Վրաստանում Միավորված Ազգերի Կազմակերպության գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Էսսեն պետք է գրված լինի վրաց լեզվով, պարունակի նվազագույնը 150 բառ: Էսսեն հնարավոր է ուղարկել էլեկտրոնային ձեւաչափով կամ տպագիր եւ ձեռագիր տարբերակով: Ստեղծագործական աշխատանքի վերջում պետք է նշել հեղինակի անունը, ազգանունը, դասարանը, դպրոցի անվանումը եւ կոնտակտային տվյալները:

Մրցույթի արդյունքում հատուկ կազմված հանձնաժողովը կընտրի 4 հաղթողների, ովքեր մայիսի 26-ին, Վրաստանի անկախության օրվան նվիրված միջոցառմանը կպարգեւատրվեն պատվոգրերով եւ պլանշետներով: Էսսեն կարող եք ուղարկել հետեւյալ հասցեներով. էլ. հասցե՝ press@smr.gov.ge կամ՝ Թբիլիսի, Լեոնիձե 3/5, Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետնախարարի գրասենյակ (տեղեկատու անձ՝ Մանանա Մճեդլիշվիլի - 577 999 773, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում՝ պետնախարարի աշխատակազմի ներկայացուցիչ Արտյուշ Մելքոնյան - 593 381 038, Քվեմո Քարթլիի տարածաշրջանում՝ պետնախարարի աշխատակազմի ներկայացուցիչ Ջաուր Դարգալի - 591 300 036):



ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՎՈՒՄ ԵՆ

Գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի, վարչական այլ պաշտոններում նշանակման տարիքային սահմանափակումները վերացվում են: Վրաստանի կառավարությունը խորհրդարանի հաստատմանն է ներկայացրել փոփոխություններ գիտության, տեխնոլոգիաների եւ դրանց զարգացման օրենքներում, ըստ որի՝ վերացվում է գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի կամ վարչական այլ պաշտոններում նշանակման համար սահմանված 65 եւ ավելի տարիքի սահմանափակումը: Ինչպես նշեցին կառավարությունում, տարիքային սահմանափակման վերացումը պայմանավորված է գիտահետազոտական ինստիտուտների կոլեկտիվների յուրահատուկ կազմով եւ առանձնահատկությամբ:

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի արդարադատության նախարարի պաշտոնակատար Ալեքսանդր Բարամիձեի նախագահությամբ անցկացված հակակոռուպցիոն խորհրդի նիստում հաստատվեց 2017-2018 թվականների հակակոռուպցիոն ռամավարությունն ու գործողության ծրագիրը:

Ինչպես տեղեկացրել է արդարադատության նախարարությունը, ռազմավարությունն ու գործողության ծրագիրը մշակվել են պետական գերատեսչությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ու միջազգային առաքելությունների հանձնարարականների հաշվառմամբ:

Ռազմավարական նոր փաստաթղթում հաշվի են առնվել CE խմբի երկրների, կոռուպցիայի դեմ պայքարի «Տնտեսական զարգացման եւ համագործակցության կազմակերպության հակակոռուպցիոն ցանց» եւ ոչ կառավարական TI, IDFI, GYLA կազմակերպությունների հանձնարարականները:

ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԵՂԱՎ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Պաատա Խիզանիշվիլին պաշտոնաթող է եղել: Նա հայտարարել է, որ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, ներկայացրել է պաշտոնաթողության դիմում, թեեւ չի մանրամասնել, թե որ կառույցում եւ ինչ պաշտոնում է աշխատելու:

Թե ով կզբաղեցնի նահանգապետի թափուր պաշտոնը, դեռեւս հայտնի չէ: Նշենք, որ Պաատա Խիզանիշվիլին Քվեմո Քարթլիի նահանգապետի պաշտոնում նշանակվեց 2014 թվականի դեկտեմբերին:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(28 ապրիլի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.395	2.495
ԵՎՐՈ	2.581	2.741
ՌՈՒԲԼԻ	0.04	0.047
ԴՐԱՄ	0.0038	0.0055

Ապրիլի 21-ի համեմատությամբ, դոլարի կուրսը աճել է 0.03 լարիով:

ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նախագահ Սերժ Սարգսյանը՝ տիկնոջ Ռիտա Սարգսյանի հետ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց 1915թ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած ոճիրի՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Հայաստանի ղեկավարի հետ Ծիծեռնակաբերդի բարձունք էին եկել նաեւ Հայաստանի ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Անմար կրակի մոտ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարեց հոգեւոր դասը, ներկաները գլուխ խոնարհեցին եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին սպանված 1,5 միլիոն հայերի հիշատակը:

Օսմանյան կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության փաստը հիմնավորվել է, ճանաչվել ու հաստատվել ականատեսների վկայություններով, օրենքներով, բանաձեւերով ու բազմաթիվ նահանգների եւ միջազգային կազմակերպությունների որոշումներով: Հայոց ցեղասպանությունն ընդունել են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Եվրոպայի խորհուրդը, Եվրախորհրդարանը, ՄԱԿ-ի մի քանի հանձնաժողովներ, Եկեղեցիների համաշխարհային միությունը, ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանը եւ այլն: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են շատ պետություններ. առաջինը պաշտոնապես ընդունել է Ուրուգվայը 1965թ.: Հայ ժողովրդի կոտորածը պաշտոնապես դատապարտել ու ճանաչել են որպես ցեղասպանություն՝ ըստ միջազգային իրավունքի, հետեւյալ երկրները՝ Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Նիդերլանդներ, Շվեյցարիա, Շվեդիա, Ռուսաստան, Լեհաստան, Լիտվա, Հունաստան, Սլովակիա, Կիպրոս, Լիբանան, Ուրուգվայ, Արգենտինա (2 օրենք, 5 բանաձեւ), Վենեսուելա, Չիլի, Բոլիվիա, Կանադա, Վատիկան, Ավստրիա, Լյուքսեմբուրգ, Չեխիա, Գերմանիա, Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգը, ԱՄՆ 45 նահանգներ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խաղաղության հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Գիորգի Թումասյանը:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեն իր ելույթում նշեց, որ այս ողբերգական օրը իրեն պարտավորված է զգում հայ ժողովրդի կողքին լինել եւ վշտակից դառնալ նրան:

Հիշատակի միջոցառման ընթացքում հնչեցին նաեւ երաժշտական եւ ասմունքի կատարումներ:

ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻՆ

Ապրիլի 24-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակին մատուցեց պատարագ, որին ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպան Յուրի Վարդանյանը, Վրաստանի խորհրդարանի անդամներ, Թբիլիսիի հայ համայնքի ներկայացուցիչներ, խորհրդարանի պատգամավորներ, համայնքային գործիչներ, մտավորականներ:

Պատարագին հետեւեց եկեղեցու բակում կանգնեցված Ցեղասպանության հիշատակի Խաչքարի մոտ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի ոգեկոչման հատուկ արարողությունը:

Թբիլիսիում անցկացված միջոցառումներին, որը կազմակերպել էին Վրաստանում Հայաստանի դեսպանությունը, Վիրահայոց թեմը, Վրաստանում գործող պետական եւ հասարակական կազմակերպությունները, ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը՝ տիկնոջ Էլեոնորա Վարդանյանի հետ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Դավիթ Ճիճինաձեն եւ Ռուսլան Պողոսյանը, Թբիլիսիի սակրեբուլոյի Իսանիի շրջանից պատգամավոր Իլիա Ջիշկարիանին, Վրաց Ուղղափառ Եկեղեցու «Վրացական համալսարանի» ռեկտոր, պրոֆեսոր Սերգո Վարդոսանիձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Հայարտուն» մշակութային կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը, Թբիլիսիի Վ.Սարաջիշվիլու անվան կոնսերվատորիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Էռնեստ Առաքելովը: Այստեղ էին նաեւ Վրաստանում Գերմանիայի, Հոլանդիայի, Բուլղարիայի, Իսրայելի, Վատիկանի, ԱՄՆ-ի դեսպանությունների, Շվեյցարիայի դեսպանությունում Ռուսաստանի ներկայացուցչության, միջազգային կազմակերպությունների, քույր եկեղեցիների, ազգային փոքրամասնությունների, վրաց հասարակայնության ներկայացուցիչները:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏ

Թբիլիսիում, Վակեի թաղամասում գտնվող Թուրքիայի դեսպանության մոտ ապրիլի 24-ին անցկացվեց հանրահավաք:

Հանրահավաքին մասնակից շուրջ 200 երիտասարդների առջեւ հայերենով, վրացերենով եւ անգլերենով ելույթ ունեցողները Հայոց ցեղասպանության ճանաչման ու հատուցման կոչ արեցին:

Հանրահավաքն անցկացվեց խաղաղ մթնոլորտում, պահպանելով հասարակական կարգի բոլոր նորմերը:

ԲԱԹՈՒՄԻ
ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՐԲԱԴԱՍՎԱԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում եւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Խաչքարի մոտ կատարվեց Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին նվիրված բարեխոսության կարգ: Միջոցառմանը ներկա էր Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ-ՆԻՆՈԾՄԻՆԴԱ
ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ անցկացվեցին Ախալքալաքիում: Տեղի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվեց հոգեհանգստյան պատարագ, ապա հավաքվածները ծաղկեպսակներ դրեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Խաչքարին:

Ապրիլի 24-ին, ի նշանավորումն Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի, Նինոծմինդայի մունիցիպալիտետի հասարակությունը, հյուրերի հետ միասին, հավաքվեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի մոտ, հարգանքի տուրք մատուցելու սրբադասված նահատակների հիշատակին:

Ցեղասպանության 102-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցեցին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Սամվել Մանուկյանը, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների վարչության նախագահներ Էդուարդ Աղասարյանը եւ Գագիկ Կարսլյանը, սակրեբուլոյի նախագահներ Համլետ Մովսիսյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, տեղական ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ:

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓ. «ՄԵՆՔ ՀԻՇՈՒՄ ՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԵՆՔ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻ ԲՈՎՈՎ ԱՆՁԱՑՆԵՐԻՆ»

Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի կապակցությամբ, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը տարածել է հայտարարություն:

Իր ուղերձում ԱՄՆ նախագահը նշել է. «Այսօր մենք հիշում եւ ոգեկոչում ենք 20-րդ դարի վատթարագույն զանգվածային վայրագություններից մեկի՝ Մեծ Եղեռնի (**«Մեծ Եղեռն» եզրույթը ԱՄՆ նախագահը արտասանեց հայերեն. խմբ.**) տառապանքների բովով անցածներին:

1915թ. սկսած՝ Օսմանյան կայսրության վերջին տարիների ընթացքում, մեկ ու կես միլիոն հայեր զոհ են գնացել տեղահանություններին, կոտորածներին ու մահվան երթերին: Ես միանում եմ Ամերիկայի հայկական համայնքին եւ աշխարհասփյուռ հայությանը՝ սգալու կորսված մարդկային անմեղ կյանքերի ու կրած բազում տառապանքների վիշտը:

Մտորելով մարդկային պատմության այս մռայլ դրվագի շուրջ՝ մենք նաեւ արժանին ենք մատուցում հայ ժողովրդի աննկուն ոգուն: Շատերը նոր կյանք կերտեցին Միացյալ Նահանգներում եւ իրենց անջնջելի ներդրումն ունեցան մեր երկրում՝ իրենց սրտում վառ պահելով հիշողությունները պատմական հայրենիքի մասին, որտեղ նրանց նախնիները կերտել էին հնագույն հզոր քաղաքակրթություններից մեկը:

Մենք պետք է հիշենք վայրագությունները, որպեսզի թույլ չտանք դրանց կրկնությունը: Մենք ողջունում ենք ցավալի անցյալի փաստերն ընդունելու ու դրանց հետ հաշվի նստելու ջանքերը, որ ձեռնարկվում են հայերի ու թուրքերի կողմից՝ որպես առավել արդարացի ու հանդուրժողական ապագայի համար հիմքեր նախապատրաստելու հույժ կարեւոր քայլ»:

ԵՐԿԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎ՝ ԱՄՆ ՍԵՆԱՏՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Ջերսի նահանգը ներկայացնող դեմոկրատ սենատոր Ռոբերտ Մենենդեսը ապրիլի 24-ին Սենատին ներկայացրել է երկկուսակցական նախագիծ, որով առաջարկվում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Ներկայացված նախագծով առաջարկվում է երաշխավորել, որ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը կարտացոլի համապատասխան ըմբռնում մարդու իրավունքներին առնչվող հարցերին, մարդկության դեմ հանցագործություններին, էթնիկ զտումներին եւ ցեղասպանություններին՝ ԱՄՆ-ի կողմից փաստագրված Հայոց ցեղասպանության օրինակով:

Նախագծի համահեղինակներն են սենատորներ Թեդ Քրուզը, էդ Մարկին եւ Թոմ Ուդոլը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՊՐԻԼԻ 24-Ի ՈՒՂԵՐՁԸ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության տարելիցին հանդես է եկել հայտարարությամբ:

Նրա ուղերձն ընթերցվել է Ֆերիքյոյի Սուրբ Վարդանանց եկեղեցում կազմակերպված արարողության ժամանակ: «Անադոլու» գործակալությունը նախագահական ուղերձը հրապարակել է արեւելահայերենով եւ արեւմտահայերենով:

Ուղերձում Էրդողանը, խոսել է միայն «Առաջին համաշխարհային պատերազմի դժվար պայմաններում կյանքից հեռացած օսմանյան հայերի մասին»՝ ցավակցություն հայտնելով նրանց թոռներին: Ուղերձում Թուրքիայի նախագահը կարեւորել է հայ համայնքի դերը երկրի զարգացման գործում՝ նշելով, թե հայերը «ինչպես երեկ, այնպես էլ այսօր երկրի հավասար ու ազատ քաղաքացիներն են, կարեւոր դեր են կատարում հասարակական, քաղաքական ու առեւտրային կյանքում»:

Ուղերձում Էրդողանը հայտնել է, թե իրենք առաջիկա ժամանակաշրջանում շարունակելու են աշխատանքները՝ «ուղղված Օսմանյան հայերի հիշողությանն ու հայկական մշակութային ժառանգությանը տեր կանգնելուն»:

«Աստծուց ողորմություն եմ խնդրում միլիոնավոր օսմանյան քաղաքացիների համար, ովքեր կյանքից հեռացել են Առաջին համաշխարհային պատերազմի դժվարին պայմաններում»,- ասվում է ուղերձի եզրափակիչ հատվածում: